

# ԻՌԻԲԱՌԵՆ ՊԻՆԻԼՈՍՆ ԸՆԴԴԵՄ ԻՍՊԱՆԻԱՅԻ ԳՈՐԾՈՎ

2009թ. հունվարի 8-ի վճիռը

## ՍՏՐԱՓԲՈՒՐԳ

### ՓԱՍՏԵՐ

#### I. ԳՈՐԾԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

7. Դիմողը ծնվել է 1973 թվականին և բնակվում է Պամպելունում:

#### A. Գործի հանգամանքները

8. 1991թ. դեկտեմբերի 15-ին՝ երեկոյան, իին Պամպելուն թաղանասում տեղի է են ունենում ծանր և դաժան բախումներ: Ցուցաբարները փողոցներում բարիկադներ էին պատրաստում և կրակներ վարում: Ոստիկանությունը ցույցի առաջնադրությունը կանխելու նպատակով մի քանի ժամ օգտագործել է արցունքաբեր և ծխատար նոնակներ:

9. Առավոտյան ժամը 2-ին մոտ, 19-ամյա դիմողը, ով նասնակցում էր այդ բախումներին, շատ մոտ տարածությունից ոստիկանի նետած ծխատար նոնակի պատճառով ծանր վիրավորվել է: Երբ կարմիր խաչի ծառայությունը ժամանել է դեպքի վայր՝ դիմողը մահամերձ էր, դեմքի մի մասի վրա կային այտուցներ, իսկ դեմքի ծախը կողմը կարվածահար վիճակում էր: Շտապօգնության միջոցով նրան տեղափոխել են Նավարի հիվանդանոցի վերակենդանացնան բաժին, որտեղ նրան բժշկական օգնություն է ցուցաբերվել:

#### 1. Վարույթը քրեական դատարաններում

10. Նույն օրը դիմողին պատճառված ծանր մարմնական վնասվածքների փաստի արիթով՝ Պամպելունի թիվ 3 քննիչ դատավորը հարուցել է քրեական գործ:

11. 1992թ. փետրվարի 12-ին թիվ 3 քննիչ դատավորն ընդունում է մի խումբ քաղաքացիների բողոքը, ովքեր սույն գործով համուս են եկել որպես ժողովրդական մեղադրող կողմ:

12. 1994թ. փետրվարի 21-ի որոշմամբ քննիչ դատավորը կարծել է վարույթը՝ հաշվի առնելով, որ դիմողին դեռ 459 օր անհրաժեշտ է ստացած վնասվածքները բուժելու համար: Մյուս կողմից՝ նա նշել է, որ դիմողը մասնակցել է բախումներին, քանի որ վզկաա (ֆուլյար) է կրել, որը ցուցաբարների կողմից օգտագործվել է որպես իրենց դեմքը թաքցնելու միջոց: Նրանց հագուստի վրա հայտնաբերվել են քիմիական նյութեր, որոնք օգտագործվել են պայթուցիկ նյութերի և պիրոտեխնի-

կայի արտադրության համար: Դիմողի ներկայացրած բողոքի մերժման վերաբերյալ որոշումը բողոքարկվել է դիմողի և ժողովրդական մեղադրողների կողմից:

13. 1994թ. հոկտեմբերի 11-ի որոշմամբ Նավարի մարզային դատարանը բեկանել է վիճարկվող որոշումը և կարգադրել է ներկայացնել նոր ապացույցներ վարույթի որոշակի տեսակետներ ընդլայնելու և դրանց վերաբերյալ տեղեկությունները խորացնելու համար:

14. 1995թ. ապրիլի 6-ի որոշմամբ Պամպելունի թիվ 3 քննիչ դատավորը նորից կարծել է գործը, այս դեպքում ոչ քննության առարկա դեպքերին մասնակցած անձանց ինքնությունը, ոչ էլ այն հանգամանքները, որոնց ընթացքում վերթերը առաջացել են, ապացույցած չեն եղել: Իր բողոքի մերժումից հետո դիմողը կրկին բողոք է ներկայացրել՝ հիմնվելով այն փաստի վրա, որ դատարանի առջև ցուցմունք տված ոստիկանության աշխատակիցը եղել է Ժխատար Նոնակը նետողը, որի հետևանքով էլ նա վիրավորվել է: Պաշտոնատար մյուս անձանց ինքնությունները չեն բացահայտվել: Նա միջնորդել է, որպեսզի իր բողոքն ըստ Էուրյան քննության առնվի:

15. 1995թ. հունիսի 8-ին դիմոդը ճանաչվել է հաշմանդամ:

16. 1995թ. սեպտեմբերի 29-ի որոշմամբ Նավարի մարզային դատարանը մասմար բեկանել է վիճարկվող որոշումները՝ գտնելով, որ իրավապահ ուժերի կողմից անօրինական կրակահերթ արձակելը և վնաս պատճառելը պատշաճ ձևով հիմնավորված է համարում միաժամանակ փաստելով, որ նոնակը նետողի անձը հնարավոր չէ պարզել:

17. 1997թ. մայիսի 6-ին Նավարի իշխանությունները ճանաչել են դիմոդի 37 տոկոս մշտական անաշխատունակությունը, և նրան տրամադրվել է թոշակ:

## 2. Պետության գույքային պատասխանատվության հետ կապված վարույթը

### ա) Վարչական մարմիններին ուղղված բողոք

18. 1996թ. հունիսի 27-ին դիմոդի պահանջով իրականացված բժշկական փորձաքննությամբ հաստատվել է, որ դիմոդը կրել է ծանր մարմնական վնասվածքներ, մասնավորապես, գլխի նյարդային համակարգի վնասվածք, ուղեղի վնասվածքներ, թմրիր (կոմա), աչքերի և դեմքի աջ կողմում երրորդ աստիճանի վնասվածքներ, ինչպես նաև նյարդային վնասվածքներ, նյարդահոգեբանական, աչքերի հիվանդություն և գլխի, պարանոցի, դեմքի վրա առկա էին սպիներ: Հաստատվել է նոնակի ազդեցության և վերոշարադրյալ վնասվածքների առաջացման միջև պատճառահետևանքային կապը և գնահատվել է պահանջվելիք փոխառուցման գումարը:

19. 1996թ. օգոստոսի 2-ին դիմոդը բողոք է ներկայացրել Ներքին գործերի նախարարություն վերոնշյալ փաստերի հիման վրա պահանջելով իր կրած վնասների և բաց թողնված օգուտների փոխառուցում: Նա պահանջել է 31 831 618 պես (191 311, 88 եվրո) ստացած վնասվածքների համար, 1 500 000 պես (9 0145,17 եվրո)՝ 1992-1996թթ. ընթացքում բաց թողնված եկամուտների համար, 10 000 000 պես (60 101,21 եվրո)՝ որպես բարոյական վնասի փոխառուցում, 2 000 000 պես (12 020,24 եվրո)՝ մշտական մասնակի անաշխատունակություն

առաջացրած վնասվածքների համար, 903 000 պես (5 427,14 եվրո)՝ 129 օր հիվանդանոցում մնալու համար և 990 000 պես (5 950,02 եվրո)՝ հիվանդանոցից դուրս գրվելուց հետո 330 օր անշխատունակառության համար: Ընդհանուր առման՝ 47 224 816 պես (283 826,86 եվրո):

20. 1996թ. սեպտեմբերի 25-ին հանրային ծառայության աշխատակցի կողմից հասցված վնասների առնչությամբ վարչական վարույթն իրականացնող մարմինը գտել է, որ վարչակազմի գույքային պատասխանատվությունը կարգավորող նորմերը կիրառելի են վիճելի փաստերի նկատմամբ:

Նա առաջարկել է դիմողի բողոքը բավարարել մասնակիորեն և դիմողին տրամադրել 14 644 842 պես (88 017, 27 եվրո)՝ որպես կրած վնասների և բաց թողնված օգուտների փոխհատուցում: Այս գումարի չափը որոշելիս գործը քննող դատավորը հաշվի է առել այն փաստը, որ դիմողը մասնակցել է 1991թ. դեկտեմբերի 15-ին տեղի ունեցած զանգվածային անկարգություններին՝ ստեղծելով վտանգավոր հրավիճակ, և այդ առումով նա պատասխանատու է եղել:

21. Դիմողը ներկայացրել է իր առարկությունները՝ հիմնվելով իր կողմից պահնջական գումարի չափի վրա:

22. Դաշվի առնելով դիմողի առարկությունները՝ գործը քննող դատավորը 1996թ. հոկտեմբերի 29-ին հանդես է եկել նոր առաջարկությամբ՝ բարձրացնելով կրած վնասների և բաց թողնված օգուտների գումարի չափը մինչև 16 811 261 պես (101 037, 71 եվրո), որը համապատասխանում էր այն գումարի կեսին, ինչ կտրամադրվեր դիմողին, եթե նա մասնակցած չլիներ անվտանգության ուժերի հետ բախմանը:

23. 1997թ. մայիսի 7-ին Ներքին գործերի նախարարությանն առընթեր պետության իրավական ծառայությունն իր գեկույցի մեջ ընդունել է դատավորի առաջարկությունները:

24. Պետական խորհուրդը, որին գործը փոխանցվել էր դիրքորոշում հայտնելու համար, իր գեկույցը կազմել է 1997թ. սեպտեմբերի 11-ին: Նա առաջարկել է մերժել դիմողի կողմից ներկայացված պահանջը: Արդյունքում՝ իր որոշմամբ նա հաստատել է, որ նարզային դատարանի կողմից չի բացահայտվել դիմողին վնաս պատճառած այն անձի ինքնությունը, ով նետել էր նորակը, և գտել է, որ ապացուցված է, որ դիմողը մասնակցել է դաժան բախումներին, որի ընթացքում էլ նորակը նետվել է, և դիմողը չի փորձել այլ կերպ հիմնավորել իր ներկայությունն այդ վայրում: Զեկույցը հանգում է այն եղրակացությանը, որ պատճառված վնասները չեն կարող մեղսագրվել վարչակազմին, և չարաշահումների արգելքի ընդհանուր կանոնը բացառում է դիմողի պահանջների բավարարումը:

25. 1997թ. նոյեմբերի 27-ի որոշմամբ Ներքին գործերի նախարարությունը մերժել է դիմողի պահանջը՝ հիմք ընդունելով պետական խորհրդի գեկույցի եղրափակիչ մասը, որի համաձայն պատճառված վնասը չի կարող մեղսագրվել վարչակազմին:

## b) Վարչական վարույթը

26. 1997թ. դեկտեմբերի 15-ին դիմումը վարչական բողոք է ներկայացրել ներկայական դատարան:

27. 1998թ. հունվարի 1-ի դատավճռով դիմողը, ով իր կրօս վճաների համար պահանջել էր 10 000 000 պես (60 101, 21 Եվրո), մասնակիորեն ստանում է բաց բողնված եկամուտները: Առաջին հերթին դատավճիռը հիշեցնում է իսպանական օրենքով վարչակազմի պատասխանառության օրինակությունը՝ բնույթի մասին, մասնակիորապես այն, որ հանրային ծառայության աշխատակցի կողմից պատճառված վճարը դարձավ կանոն, ենթակա է փոփոխառուցման: Այն ծշտում է, որ քրեական դատարանի կողմից հաստատվել է, որ նոնակը, որով հարվածել են դիմորի գլխին և ծանր վճարվածք հասցրել, նետվել է շատ մոտ տարածությունից, ոստիկանության մի աշխատակցի կողմից, ում անձը հայտնի չէ և ով այդ ժամանակ կատարել է իր ծառայողական պարտականությունները: Ներպետական դատարանը գտել է, որ վարչակազմը պատասխանատու է ոստիկանության աշխատակցի ոչ համաչափ գործողության հետևանքով դիմորին պատճառված վճարի համար, քանի որ առկա է ակնհայտ պատճառահետևանքքային կապ տվյալ ոստիկանի արարքների և դիմորի ստացած վճարվածքների միջև: Դիմորի կրօս վճարների և բաց բողնված օգուտների համար վճարման ենթակա գումարը որոշելիս ներպետական դատարանը հաշվի է առել այն հանգամանքը, որ դիմորը գտնվել է այդ վայրերում և նաևն ակցել է բռնի գործողություններին ու հասարակական կարգի խախտմանը, որին միջամտել է ոստիկանությունը, ինչպես նաև դիմորի տարիքը, նրա ստացած վճարվածքի ծանրությունը, սահմանափակ աշխատունակություն և հիվանդության պահպանված հետևանքները:

28. Պետության փաստաբանը դատավճիռը բողոքարկել է վճռաբեկության կարգով: Իր վճռաբեկ բողոքում պետության փաստաբանը փաստարկել է, որ վճարը պատճառվել է բացառապես հանրային ծառայողի կողմից՝ իր սովորական կամ ոչ սովորական պարտականությունների հրականացման ժամանակ՝ պայմանով, որ որևէ այլ արտաքին ուժ չի միջամտել: Փաստաբանը գտել է, որ սույն գործով չկա անմիջական կամ ուղղակի պատճառահետևանքքային կապ դիմորի կրօս վճարների և ոստիկանի գործողությունների միջև, չնայած որ իհմնավիրոված չէ դիմորի ներկայություն այդ վայրերում և նրա մասնակցությունն այդ բախտամներին:

29. 2003թ. հունվարի 31-ի դատավճռով բարձրագույն դատական ասյանը բավարարել է փաստաբանի վճռաբեկ բողոքը և բեկանել բողոքարկող դատավճիռը: Նա հաստատել է նաև այն հանգամանքը, որ դիմորը նաևն ակցել է այդ անկարգություններին, ինչպես դա պացուցվել էր քրեական դատարանի կողմից, բարձրագույն դատական ատյանը նշել է՝ որ չնայած որ հասարակական կարգը պահպանող ուժերի կողմից դիմորին պատճառվել են վճարվածքներ, դա չի կարող դիմություն անօրինական: Ուստի այն դեպքում, եթե ցուցարարները փողոցում խարույկներ վառելու միջոցով բարիկադներ են կառուցել, ոստիկանությունը ստիպված է եղել մի քանի ժամ օգտագործել ծխատար նոնակներ: Դիմորը ևս աջակցել է վտանգավոր իրավիճակի ստեղծմանը և դարձել դուս գոհ: Յաշվի առնելով վերոնշյալը՝ բարձրագույն դատական ասյանը գտել է, որ ոստիկանության աշխատակիցների գործողությունները եղել են հանգամանքի և դիմորին պատճառված վճարվածքների առաջացումը բացատրության կարիք չունի՝ հաշվի առնելով այն, որ դիմորը նույնպես նպաստել է դրանց առաջացմանը:

30. Դատավճռին կցվել է հասուլ կարծիք: Մագիստրատները գտել են՝ չնայած այն հանգամանքին, որ դիմորը նաևն ակցել է 1991թ. դեկտեմբերի 15-ի բախտամներին, նա չպետք է կրեր շատ մոտ տարածությունից նետելն արգելված այդ

նոհակի վճասակար ազդեցության ռիսկը՝ հաշվի առնելով հատկապես այն աղետալի հետևանքները, որոնք կարող էին առաջանալ դրանից: Դատարանը նշել է, որ պետությունը պատասխանատվություն է կրում ոչ միայն պետական վարչակազմի սխալ գործունեության դեպքում, այլև այն դեպքերում, երբ այդ գործունեությունը գտնվում է նրանց իրավասության սահմաններում, սակայն վճառ է պատճառում:

31. Դիմողը բողոք է ներկայացրել նաև Սահմանադրական դատարան: Նա հղում է կատարել Սահմանադրության 24-րդ (ողջամիտ ժամկետներում արդյա դատաքննության իրավունք), 10-րդ, 18-րդ, 15-րդ (բռնության արգելվ, անձի պատվի, արժանապատվության, ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունք) և 14-րդ (խորականության արգելքի սկզբունք) հոդվածներին:

32. 2003թ. հոկտեմբերի 21-ի որոշմանը Սահմանադրական դատարանը ներկայացված բողոքն անթույլատրելի է ճանաչել:

33. Ինչ վերաբերում է դատավարության ընթացքում պատճառված վճասին, ապա Սահմանադրական դատարանը գտել է, որ վերջինս սկիզբը 1997թ. դեկտեմբերի 15-ը, այսինքն՝ այն ժամկետը, երբ առաջին անգամ վարչական բողոք է ներկայացվել, և ոչ թե 1991թ. դեկտեմբերի 15-ը, այսինքն՝ այն ժամկետը, երբ տվյալ իրադարձությունները տեղի են ունեցել: Չնայած, որ վարչական դատավարությունը տևել է 5 տարուց փոքր-ինչ ավելի, Սահմանադրական դատարանը գտել է, որ այդ ժամանակը երկար չէ: Նման եզրակացության դատարանը եկել է՝ հաշվի առնելով նմանատիպ դատավարությունների միջին տևողությունը, իշխանությունների և դիմոնի վարժագիծը, այն, որ նրանք չեն նպաստել դատավարական ժամկետների անհիմն երկարացմանը, և չնայած միջադեպը տեղի ունենալու պահի և պետության պատասխանատվությունը բացառող վերջնական դատական ակտի հրապարակման միջն առկա ժամանակահատվածի տևողությանը՝ մոտավորապես 11 տարի, պատճառված վճարի հատուցման վերաբերյալ դիմոնի բողոքը մերժվել է:

34. Ինչ վերաբերում է 10-րդ, 15-րդ և 18-րդ հոդվածներով պաշտպանվող իրավունքների խախտմանը, Սահմանադրական դատարանը հիշեցրել է, որ առաջին դրույթը ենթակա չէր բողոքարկման, դատարանի գնահատման՝ բարձրագույն դատական ատյանի կողմից ոստիկանության պատասխան գործողությունները ցուցարարների նկատմամբ համաշարի գնահատելը չի կարող վճառ պատճառել այդ իրավունքներին:

## II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

### 1. Իսպանիայի Սահմանադրությունը

#### Հոդված 106, կետ 2

«Քաղաքացիներն իրենց իրավունքներին և գույքին պատճառված վճարի՝ օրենքով սահմանված փոխհատուցման իրավունք ունեն՝ պայմանվ, որ վճար հանրային ծառայության գործունեության արդյունք է, բացառություն են կազմում անհաղթահարելի ուժի առկայության դեպքերը»:

2. Հանրային կառավարման իրավական ռեժիմի և վարչական գանցանքների համար նախատեսված ռեժիմի մասին նոյեմբերի 26-ի 1992/30 օրենքը (ուժի մեջ է մտել սույն գործով քննության առարկա իրադարձությունների ժամանակ)

### Հոդված 139

«1. Քաղաքացիները հանրային վարչակազմի կողմից իրենց գույքին և իրավունքներին պատճառված վնասների փոխառուցման իրավունք ունեն՝ պայմանով, որ վնասը պատճառված լինի հանրային ծառայողի կողմից իր սովորական կամ ոչ սովորական պարտականությունների հրականացման ժամանակ, բացառություն են կազմում անհարթահարելի ուժի առկայության դեպքերը:

2. Ցանկացած դեպքում, վերոնշյալ վնասը պետք է լինի իրական, տնտեսապես գնահատելի և անհատականացված անձի կամ անձանց խմբի նկատմամբ»:

### Հոդված 141, կետ 1

«Փոխառուցման ենթակա են միայն քաղաքացիներին պատճառված այն վնասները, որոնք օրենքով սահմանված կարգով իրավական հիմքեր չունեն»:

### Հոդված 142

«1. Հանրային վարչակազմի գույքային պատասխանատվության վերաբերյալ վարույթ կարող է հարուցվել բարձրագույն մարմնի կողմից կամ շահագրգիռ անձանց հայցապահանջի միջոցով:

(®)

5. (®) այդ իրավունքի վաղենության ժամկետը մեկ տարի է՝ սկսած այդ փաստի վրա հասնելու կամ փոխառուցման ենթակա գործողության կատարման կամ վնասի առաջացման պահից: Անձին ֆիզիկական կամ հոգեկան վնաս պատճառելու դեպքում վաղենության ժամկետն սկսում է ընթանալ նրանց բուժման կամ վերոնշյալ փաստերի ժամկետները որոշելու պահից:

6. Գույքային պատասխանատվության վերաբերյալ դատավարություններում վարչական որոշումը, անկախ հարաբերության հանրային կամ մասնավոր լինելուց, սահմանափակվում է վարչական միջոցով (®)»:

## ՕՐԵՆՔԸ

### I. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՅՈՒՆԻՏ ԵՎ ՑՈՂՎԱԾՆԵՐԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱՆ-ՍՈՒՄՆԵՐ

35. Դիմողը փաստարկել է, որ ոստիկանության աշխատակիցների անհամաշափ հակագրեցության հետևանքով վնաս է պատճառվել իր ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությանը, որի արդյունքում իրեն ծանր վնասվածքներ են պատճառվել: Նա գտել է, որ քրեական դատավարության ընթացքում չի իրավվել արդյունավետ դատաքննության իր իրավունքը, դրա շղանակներում չի բացահայտվել ծխատար նոնակը նետած մեղավոր անձի ինքնությունը, նա պնդել է նաև, որ որևէ լրացուցիչ հետաքննություն վարչական դատական ատյանների կողմից չի իրականացվել: Նրա պնդմամբ՝ բարձրագույն դատական ատյանը հրաժարվել է պատճառված վնասների համար իրեն փոխառուցում տրամադրել: Նա նշել է, որ առկա է Կոնվենցիայի 3-րդ և 8-րդ հոդվածների խախտում:

Սատնամշված դրույթները հետևյալն են.

### Յոդված 3

«Ոչ ոք չպետք է ենթարկի խոշոնագումների կամ անմարդկային կամ արժանապատկիւթյունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»:

### Յոդված 8, կետ 1

«Յուրաքանչյուր ոք ումի իր անձնական և ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք»:

#### 1. Ընդունելիությունը

36. Ինչ վերաբերում է մատնանշված դրույթներին, ապա Կառավարության առարկությունը վերաբերում է բոլորարկման ներաբետական միջոցների լիարժեք չօգտագործմանը, այն դեպքում, եթե դիմողը միայն գույքային պատասխանատվության վերաբերյալ դատավարությունն է բողոքարկել: Անպարոն ներկայացվել է միայն դիմոնի փոխհատուցնան պահանջների մերժման և ոչ թե քրեական դատավարության շրջանակներում քննիչ դատավորի կողմից ընդունված և մարզային դատարանի կողմից հաստատված՝ գործը կարծելու մասին որոշման դեմ:

37. Դիմողը նշել է, որ քրեական դատարանը եզրակացրել է, որ վնասվածքներ պատճռելը հանցագործություն է, սակայն ոստիկանության աշխատակիցը, ով վնասվածքներ է հասցել, հայտնի չէ: Նրա ինքնությունը հնարավոր չի եղել պարզել, անարդյունավետ է եղել վարույթի ժամանակի երկարացումը 4 տարի ժամկետով, այն դեպքում, եթե մեղավոր անձը հայտնի չի եղել, դիմողը չի կարողացել իրականացնել իր քաղաքացիական իրավունքները քրեական դատավարության ընթացքում (հանցագործության կամ զանցանքի համար պատասխանատու անձը պատասխանատվություն է կրում նաև քաղաքացիական դատավարության կարգով): Միա թե ինչու դիմուղը գույքային պահանջ է ներկայացրել վարչակազմին և այնուհետև՝ վարչական դատական ատյանին, առաջին ատյանի դատարանին, Սահմանադրական դատարանին: Բողոքարկման ներպետական միջոցների լիարժեք օգտագործման կանոնից որևէ չեղում նա թույլ չի տվել:

38. Դատարանը պարզել է, որ դեպքերի կատարման օրը դիմոնին պատճառված ծանր վնասվածքների փաստի առիվ Պամակելումի թիվ 3 քննիչ դատավորի կողմից քրեական վարույթ է հարուցվել: Այն արձանագրել է, որ քննիչ դատավորի կողմից երկու անգամ վարույթը կարճվել է, Նավարի մարզային դատարանը հիմնավորված է համարել այն հանգամանքը, որ վնասվածքները պատճառվել և համապատասխան հանցագործությունը կատարվել է ուժային կառույցների կողմից, այնուամենայնիվ, վերջինս հաստատել է, որ ծխատար սարքը նետած անձի ինքնությունը հնարավոր չի եղել պարզել, ուստի մարզային դատարանը հաստատել է վարույթը կարծելու մասին բողոքարկված դատական որոշումը:

39. Դատարանի կարծիքով՝ այս արձանագրությունը բավարար էր, որպեսզի դիմուղը կարողանար վարչակազմին պատասխանատվության ենթարկելու մասին վարույթ հարուցել, քանի որ քրեական դատավարությունում հաստատվել էր այն փաստը, որը իրավախախտումը կատարվել է վարչակազմի աշխատակիցներից որևէ մեկի կողմից: Սահմանադրական դատարանին ներկայացված անպարոն կարող էր հաստատել այս արձանագրությունը, սակայն դիմուղը դա չի արել, չի նշել մեղավոր անձին կամ անձանց, քրեական դատավարության ուղղակի կամ կոմիտետ

**Նպատակը:** Այս, Սահմանադրական դատարանը կարող էր հանձնարարել դատական ատյաններին ներկայացված ապացույցներով նորից բննել գործը կամ ներկայացնել նոր ապացույցներ, ինչը կերկարացներ առանց այն էլ գրեթե 4 տարի տևած դատավարությունը: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ ոինողը որոշել է վարչակազմի պատասխանատվության վերաբերյալ հայցապահանց ներկայացնել, պատասխանատվություն, որը հաստատվել է քրեական դատավարության կազմով:

40. Դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում դիմողին, ով ընտրել էր առավել արդյունավետ վարչական փոխհատուցման ճանապարհը, կարելի էր առաջարկել վնասների վերականգնում և հաջողության հասնելու ողջամիտ տեսակետներ ներկայացնելով՝ հնարավոր չեր լինի նրան մեղադրել դրանցից բացի այլ միջոցներ օգտագործել փորձ չկատարելու մեջ, քան այն, ինչը հասանելի է եղել, սակայն սույն գործով ներկայացվել էին ավելի նվազ հաջողության հնարավորություններ (տե՛ս օրինակ, Սելմունին ընդդեմ Ֆրանսիայի 1999թ.-ի հունվարի 28-ի վճիռը, գանգատ թիվ 25803/94): Ինչ վերաբերում է կատարված խախտումներին, ապա 35-րդ հոդվածի 1-ին պարբերությունը հիմնվում է 13-րդ հոդվածում ամրագրված այն դրույթի վրա, որ ներքին կարգը առաջարկում է արդյունավետ քողոքարկման հնարավորություն: Նշված գանգատները, մյուս կողմից՝ պետք է լիովին կապված լինեն համապատասխան, կատարված և դատապարտելի խախտումների հետ (տե՛ս օրինակ Միֆսուտին ընդդեմ Ֆրանսիայի վճիռը, գանգատ թիվ 57220/00):

41. Այս առօնմով Դատարանն արդեն հայտարարել է, որ եթե ֆիզիկական անձեռնմխելիության կամ կյանքի իրավունքի խախտումը դիտավորյալ չի կատարվել, ապա արդյունավետ դատական համակարգն ամեն դեպքում չի պահանջում քրեական հետապնդման իրականացում, և նման պարտականություն կառաջանա, եթե քաղաքացիական, վարչական և կարգապահական վարույթներ հարուցված լինեն շահագրգոր անձանց նկատմամբ: Այս տեսանկյունից՝ 2006թ. նոյեմբերի 28-ի Սույնու Սալրիան ընդուն Խսպանիայի վճռում, դատարանը հաճախ է այն եղանակացության, որ դիմողի կողմից չեն սպառվել իրավական պաշտպանության բոլոր ներպետական միջոցները, քանի որ նշված գործով դիմողները, ուվեր վկայակոչել էին Կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտում, վարչական դատարաններին չեն ներկայացրել պետությանը պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հայցապահանց, մինչեւ սույն գործով դիմողը դա արել է:

42. Վերոշարադրյալի հիման վրա անհրաժեշտ է վերացնել Կառավարության կողմից մատնանշված քացառությունը:

43. Սյուս կողմից՝ Դատարանը հաստատում է, որ այս գանգատը Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով ակնհայտ անհիմն չէ: Ապա այն նշում է, որ բողոքը որևէ այլ հիմքով անընդունելի չէ: Եթևաբար, այն պետք է ընդունելի համարվի:

## **2. Հանգամանքները**

### **1. Կողմերի փաստարկները**

44. Դիմողը գտել է, որ իրեն պատճառված վնասներն ամմարդկային և նվաստացնող վերաբերմունքի արդյունք են և վնաս են պատճառել իր անձնական կյանքին: Նա հիշեցրել է, որ քրեական դատավարությունը թույլ տվեց պարզել, որ

ոստիկանության մի աշխատակից պատասխանատու է իր վնասվածքների համար, սակայն քննիչ դատավորից թաքցել է իր ինքնությունը: Մոտ տարածությունից նետված ծխատար նոճակից տուժածին պատճառված վնասները եղել են «ոչ ցանկալի և պատահական»: Արդյունքում՝ նրան ծանրագույն վնասվածքներ են պատճառվել, նա ընկել է բնրիրի (կոմայի) մեջ և գրեթե հասել մահվան: Սակայն պետությունն իր մասով ազատվել է բոլոր տեսակի գույքային պատասխանատվություններից, և նա ստիպված է եղել միայնակ կրել պետության աշխատակցի կողմից կատարված իրավախախտման հետևանքները:

45. Դիմողը նշել է, որ ոչ ոստիկանական մարմինները, ոչ ծխատար նոնակը նետած ոստիկանը դատավարության որևէ փուլում չեն համագործակցել դատական իշխանության մարմինների հետ՝ բացահայտելու համար այն փաստերն ու հանգանանքները, որոնց պարագայուն տեղել են ունեցել այդ իրադարձությունները, և ոչ էլ աջակցել են ապացուցելու պատճառված վնասների համար նրա պատասխանատվությունը կամ համատեղ պատասխանատվությունը: Նա նշել է, որ ոչ ազգային դատարանը, ոչ բարձրագույն դատարանը և ոչ էլ Սահմանադրական դատարանը վարչադրավական դատավարության շրջանակներում բազմակողմանի քննություն չեն իրականացրել:

46. Կառավարությունը նշել է, որ դիմողը մասնակցելով բռնի և անօրինական ցույցին՝ նույնական աջակցել է վտանգի առաջացմանը, ինչն անցանկալի հետևանքներ է ունեցել: Տվյալ դեպքում նա չի գտել, որ առկա է դիմողի անձնական կյանքին հասցված վնաս, իսկ ոստիկանների գործողություններն անբողջովին հիմնավորված են, չնայած որ հասարակական կարգին լուրջ վնաս է հասցվել և ծխատար նոնակի նետումը եղել է պատահականության արդյունք: Կառավարության պնդմամբ՝ այս իրավիճակում չկա ոչ անմարդկային և նվաստացնող վերաբերմունք, ոչ անձնական կյանքին հասցված վնաս, իսկ առկա վնասները չեն ենթադրում, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ և 8-րդ հոդվածների խախտում:

## 2. Դատարանի գնահատականը

47. Դատարանը 3-րդ հոդվածի կապակցությամբ հիշեցնում է, որ Կոնվենցիայի 1-ին հոդվածը մասնակից պետություններին պարտավորեցնում է իրենց դատական իրավագործության ներքո գտնվող յուրաքանչյուր անձի համար ապահովել Կոնվենցիայով նախատեսված իրավունքների ու ազատությունների իրացումը և հանձնարարում է ծեռնարկել համապատասխան միջոցներ, որպեսզի վերոնշյալ անձինք չենթարկվեն վատ վերաբերմունքի: Այսպիսով, պետությունը կարող է պատասխանատվության ենթարկվել այն ժամանակ, երբ օրենքը չի ապահովում բավարար պաշտպանություն:

48. Դատարանն արդեն հայտարարել է, որ եթե կյանքին և ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքին պատճառված վնասը դիտավորյալ չի պատճառվել, ապա բոլոր դեպքերում արդյունավետ դատական համակարգը չի պահանջում պարտադիր կարգով քրեական քննության իրականացում, և նման պարտականություն կարող էր առաջանալ, եթե քաղաքացիական, վարչական, կարգապահական իրավունքի ճանապարհները բաց լինեին շահագրգիռ անձանց համար:

49. Անուամենայնիվ, սույն գործով քննության առարկա հանդիսացող ոլորտներում կիրառվելիք սկզբունքները, որոնք զարգացվել են Դատարանի կողմից, և որոնք կիրառվում են նման գանգատմերի դեպքում, անբողջովին ենթակա են կի-

րառնան նաև այլ բնույթի գործերով: Այս տեսանկյունից կարևոր է հիշեցնել, որ եթե ինքնասպանության դեպքերով 2-րդ հոդվածը պարտավորեցնում է պաշտոնական քննություն իրականացնել, ապա դա արփում է ոչ միայն նրա համար, որ այս վերնագրում ձևակերպված հղումներն են պահանջում քրեական պատասխանատվություն, այլ հատկապես նրա համար, որ պրակտիկայում պատահում է, որ միայն պետական իշխանությունները և իրավասու անձինք են իմանում և կարող են իմանալ իրական հանգամանքները, որոնց պայմաններում նահել վրա է հասել:

50. Այս եզրահանգումները, անկասկած, հաշվի են առնվիւմ նաև այն դեպքերում, երբ պատճառված վնասները հանրային իշխանության պատասխանատվության ներքո առաջացած իրադարձությունների հետևանք են և սահմանվում են Կոնվենցիայի ոչ թե 2-րդ, այլ 3-րդ հոդվածով: Նման դեպքում, իրավասու իշխանությունները պետք է պատշաճ արագություն և ջանասիրություն գործադրեն և հանգապատասխան նարմիններին հանձնարարեն հետաքննություն իրականացնել պարզելու համար, մի կողմից, այն հանգամանքները, որոնց պարագայում նման վնաս է հասցել, ինչպես նաև այդ փաստի քննության ընթացքում թույլ տրված բոլոր թերությունները և, մյուս կողմից՝ հանգամանքների համադրմամբ բացահայտել հանգապատասխան պետական նարմիններին ու պաշտոնատար անձանց:

51. Տվյալ դեպքում, կողմերը չեն վիճարկել այն, որ քրեական դատարանի կողմից հաստատվել է, որ շահագործի անձը ոստիկանի կողմից վիրավորվել է անվտանգության ուժերի հետ դաժան բախումների ընթացքում: Մյուս կողմից՝ չնայած քննությանը, որի ընթացքում չի պարզվել նոնակը նետած ոստիկանի հնքնությունը, նրան ննում է ոչ այլ, ինչ քան 1995թ. սեպտեմբերի 25-ի իր որոշումը, որով Նավարի մարզային դատարանը գտել է, որ անվտանգության ուժերը կատարել են իրավախախումներ և դրա արդյունքում վնասվածքներ են հասցել: Այսպիսով, դիմողին պատճառված վնասի համար պետությունը պատասխանատվություն է կրում:

Մնում է պարզել, թե արդյոք դիմուլը կարողացել է ստանալ պատճառված վնասներին հանգապատասխան փոխհատուցում:

52. Դատարանն արդեն հաստատել է, որ տեղի է ունեցել կոնվենցիայով սահմանված մեկ կամ մի շարք իրավունքների խախտում: Տուժողը պետք է հնարավորություն ունենա պատասխանատվության ենթարկել պետական նարմիններին կամ պաշտոնատար անձանց: Ինչ վերաբերում է վնասների փոխհատուցմանը, ապա այն, որպես կանոն, պետք է հնարավոր լինի և վերականգնման ռեժիմի մասը կազմի: Սա կիրառվում է Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտման դեպքում:

53. Սույն գործով՝ քրեական վարույթն ավարտվել է մասամբ հայցից հրաժարվելու պատճառով վարույթի կարճմամբ և որևէ որոշում չի կայացվել: Սակայն՝ դրանից հետո դիմողը ներքին գործերի նախարարության վարչակազմի դեմ գույքային պահանջ է ներկայացրել՝ իրեն պատճառված վնասների համար մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկելու համար: Գործը քննող վարչական դատարաններն իրավասու էն որակել արարքները, որոշել դրանց կատարման համար մեղավոր անձանց և կայացնել կատարողական որոշումը: Դիմողի ընտրած վարչական ճանապարհը բավարար էր, որպեսզի նա կարողանար հաստատել իրեն պատճառված նյութական վնասները, և նրան՝ հոդված 3-ի խախտման համար հանգապատասխան փոխհատուցում տրամադրելը թույլատրելի էր: Այսպիսով, դիմողն օգտվել է վարչակազմի գործողության հետևանքով փոխ-

հատուցում ստանալու ողջամիտ հեռանկարներից: Մնում է պարզել, թե արդյոք այս բողոքը պրակտիկայում արդյունավետ էր՝ հաշվի առնելով սույն գործի հանգամանքները:

54. 1997թ. մայիսի 7-ի իր գեկուցում Ներքին գործերի նախարարության պետական ծառայությունը բավարարել է գործը վարող քննիչի միջնորդությունը, որի համաձայն վերջինս պետք է պատճառված վնասների համար փոխհատուցեր 101 037,71 Եվրո, այսինքն՝ այն գումարի կեսը, որը նրան կտրամարտվեր, եթե նա մասնակցած չլիներ անվտանգության ուժերի հետ բախումներին: Պետական խորհուրդը, սակայն, առաջարկել է չբավարարել դիմողի պահանջը՝ հիմնվելով այն փաստի վրա, որ դիմողին պատճառված վնասները չեն կարող մեղսագրվել վարչակազմին:

55. Դիմողն այնուհետև հարուցել է վարչական վարույթ և մասնակի բավարարում է ստացել արաջին ատյանի դատարանում: Այնուամենայնիվ, բարձրագույն դատարանը վճռաբեկության կարգով որոշել է, որ ոստիկանության պատասխան գործողությունները համաչափ չեն եղել և դիմոդին պատճառված վնասները պատահականության արդյունք են:

56. Դատարանին նման հիմնավորումը չի բավարարում: Արդյունքում՝ նա, մի կողմից, նշում է, որ քրեական դատարանը չի հաստատել կամ չի փորձել հաստատել դիմոդի պատասխանատվությունն իր կրած վնասների հարցում, մյուս կողմից՝ վարչական դատարանը դատավարության ընթացքում նույնպես չի հրականացրել լրացուցիչ քննություն՝ դիմոդի պատասխանատվության չափը որոշելու համար: Դատարանի համար դիմոդը պարտավորված չէր միայնակ կրել ծխատար նոնակի ազդեցության հետևանքը: Նոնակի օգտագործումը և դրա օգտագործման եղանակը իրենցից իրական վկանգ են ներկայացրել ներկա գտնված անձանց կյանքի և ֆիզիկական անձեռնմխելիության համար: Սակայն ներպետական դատական ատյանները մերժելով դիմոդի պահանջած փոխհատուցումը՝ բավարար կերպով չեն որոշել վնասվածքների ծանրությունը և վերջնական որոշում չեն կայացրել այն հարցի վերաբերյալ, թե պետական մարմինների կողմից նման միջոցի կիրառումն անհրաժեշտ և համաչափ էր դրա օրինական նպատակին, այն է՝ անկարգությունների դադարեցմանը:

57. Դատարանը հաստատում է, որ բարձրագույն դատարանը հաշվի չի առել վարչակազմի պատասխանատվությունն այն փաստերի կապակցությամբ, որոնք հաստատվել են քրեական դատարանի կողմից: Մյուս կողմից՝ նա պատշաճ ձևով չի ուսումնասիրել դիմոդին պատճառված՝ տնտեսապես զնահատելի և արդյունավետ վնասի առկայությունը, ոչ էլ դեպքի և վնասի միջև սույն գործով առկա պատճառահետևանքային կապը: Այսպիսով, սույն գործով տեղի չի ունեցել որևէ քննություն և որևէ հիմնավորում չի ներկայացվել բացատրելու համար իրավասության շրջանակներից թույլ տրված շեղումը:

58. Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ Դատարանը եզրահանգում է, որ խախտվել է Կոնվենցիայի 3-րդ հոդվածի:

## B. Կոնվենցիայի 8-րդ հոդվածի ենթադրյալ խախտում

59. Ի տարբերություն Կոնվենցիայի 3-րդ հոդվածի, այս տեսանկյունից կողմերի դիտարկումներն եապես նույն են:

60. Կոնվենցիայի 3-րդ հոդվածի վերաբերյալ արված եզրահանգման հիման վրա Դատարանը գտնում է, որ որևէ առանձին հարց նշանակալից չէ 8-րդ հոդվածի առունով, և այն որևէ առանձին որոշում այս դրույթի վերաբերյալ չի կայաց- նում:

## II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ ԵՆԹԱՂՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄ

61. Դիմողը պնդել է ողջամիտ ժամկետում արդար դատաքննության իրա- վունքի խախտման մասին: Նա վկայակոչել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածը, որի համաձայն.

«Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադ- րանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վեա ստեղծված անկախ ու անաշառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:

### 1. ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ

62. Դատարանը նշում է, որ այս գանգատը Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ մասի հիմաստով ակնհայտ անհիմն չէ: Այս այն նշում է, որ գանգատը որևէ այլ հիմքով անընդունելի չէ: Քետևաբար, այն պետք է ընդունելի համարվի:

### 2. ՀԱՆԳԱՄԱԲՐՆԵՐԸ

63. Դիմոդը նշել է, որ դատավարությունն սկսվել է 1991թ դեկտեմբերի 15-ին և ավարտվել 2003թ. հոկտեմբերի 21-ին Սահմանադրական դատարանի որոշ- մանը: Այսպիսով, այն տևել է 11 տարի 10 ամիս: Նա պնդել է, որ պետության գույ- քային պատասխանատվության վերաբերյալ իր հայցապահանջը չի բավարար- վել, քանի որ քրեական վարույթի ընթացքում հնարավոր չի եղել պարզել ոստի- կանական դաժան ագրեսիայի հեղինակին: Այս փաստը, որ քրեական քննությունն իրականացվել է դատարանի որոշմամբ և դեռևս ավարտված չի եղել, հանգարել է դիմոդին ներկայացնել վարչադրավական կամ քաղաքացիական հայց:

64. Կառավարությունը պնդել է, որ ժամկետն սկսել է ընթանալ 1997թ. դեկ- տեմբերի 15-ից, ինչը հաստատել է Սահմանադրական դատարանը, դա է այն ամ- սաթիվը, երբ դիմոդը բողոք է ներկայացրել իր պահանջած փոխհատուցումը պե- տության կողմից վճարելուց հրաժարվելու դեմ: Այդ ժամկետը 1991թ. դեկտեմբե- րի 15-ը չէ, ինչպես նշել է դիմոդը: Կառավարության համար դատավարության ընդհանուր ժամկետը 5 տարի և մեկ ամիս է, մինչև բարձրագույն դատարանի 2003թ. հունվարի 31-ի դատավճռի կայացումը: Այս ժամկետը չի կարող համարվել ոչ ողջամիտ: Նա հենվում է գործի բարձրության և այն փաստի վրա, որ գործը քննած երկու դատարաններից մեկը բարձրագույն դատարանն էր, ինչը հիմնավո- րում է տվյալ ժամկետը:

### 1. ԺԱՄԿԵՏԸ, ՈՐԸ ՊԵՏՔ Է ՀԱՉՎԻ ԱՌԱՎԻ

65. Ժամկետը, որը պետք է հաշվի առնվի՝ սկսվում է 1991թ. դեկտեմբերի 15-ից: Դա այն ամսաթիվն է, երբ դիմոդին պատճառվել է վճարածքներ և քրեա-

կան վարույթ է հարուցվել և ավարտվել է 2003թ. հոկտեմբերի 21-ին՝ Սահմանադրական դատարանի որոշմամբ: Ժամկետը, որը պետք է ուսումնասիրվի՝ 11 տարի 10 ամիս է: Այսպիսի եզրահանգնան գալու համար Դատարանը հաշվի է առել այն փաստը, որ արագացված քրեական դատավարությունում վճասի պատճառման համար մեղավոր անձանց ինքնությունը պարզելն անհրաժեշտ է եղել պետությանը պատասխանատվության ենթարկելու համար: Մյուս կողմից՝ Դատարանը գտնում է, որ սույն գործով դատավարական ժամկետը որոշելու համար պետք է հաշվի առնել դիմողի կատարած բոլոր քայլերը, որով նա փորձել է քրեական դատավարության միջոցով պարզել մեղավոր անձի ինքնությունը, իսկ պետական մարմնի աշխատակցի գործողության հետևանքով պատճառված վճասի փոխհատուցում ստանալ վարչակազմի պատասխանատվության վերաբերյալ դատավարության միջոցով:

## 2. Դատավարության ողջամտությունը

66. Դատարանը դատավարության ժամկետը գնահատում է ողջամիտ՝ հաշվի առնելով գործի հանգամանքները, ընդհանուր չափորոշիչները, մասնավորապես, գործի բարդությունը, իրավասու մարմինների և դիմողի վարքագիծը:

67. Դատարանը գտնում է, որ գործն իրենից որոշակի բարդություն է ներկայացրել, սակայն դա չէր կարող հիմնավորել գործի այդքան երկարատևությունը: Ինչ վերաբերում է դիմողի վարքագիծն, ապա գործի վարույթից չի երևում, որ նա նպաստել է դրա ծգգմանը՝ չհաշված այն 10 ամիսը, որը նրան անհրաժեշտ է եղել բաց թռնված օգուտների և վնասների փոխհատուցման նպատակով ներքին գործերի նախարարություն պահանջ ներկայացնելու համար: Այս ժամկետը նախատեսված է օրենքով: Այսպիսով, Դատարանը հաշվի առնելով ողջամիտ ժամկետի կապակցությանը Կոնվենցիայի մարմինների դատական պրակտիկայի կողմից սահմանված չափանիշները, ինչպես նաև իր տրամադրության տակ գտնվող բռնությունը, գտել է, որ դատարանում վեճը չի քննվել ողջամիտ ժամկետում:

## III. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

68. Կոնվենցիայի 41-րդ հոդվածը նախատեսում է.

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմից ներպետական իրավունքն ընծեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

## A. Վնասը

### 1. Նյութական վնաս

69. Դիմողը պահանջել է 283 826,86 եվրո՝ որպես իրեն պատճառված նյութական վնասի փոխհատուցում. Փոխհատուցման այդ չափը պահանջվել է իսպանիայի դատական ատյաններից՝ գումարած 141 409,40 եվրո, որը համապատաս-

խանում է 1991թ. դեկտեմբերի 15-ից մինչև դատարանի կողմից դատավճռի կայացման օրը կատարված փոփոխությանը:

70. Կառավարությունը պաշտպանել է այն տեսակետը, որ պատճառված վնասների պատասխանատվությունը դիմողի կողմից ամբողջովին և բացարձակապես չի կարող վերագրվել պատասխանող պետությանը: Դանենայնդեպս այն գտել է, որ դիմողի պահանջած գումարները գերազանցում են նմանատիպ վնասների փոխհատուցման համար ներպետական դատարանների կողմից որպես կանոն վճարվող գումարը:

71. Դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում իր կողմից հաստատված Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտման և շահագրիր անձի վկայակոչած նյութական վնասի միջև առկա է բացահայտ պատճառահետևանքային կապ: Դաշվի առնելով այն անորոշությունները, որոնք բնութագրում են դիմողի իրավիճակը, նրա վիճակի ծանրությունը, նրա անաշխատումակությունը՝ Դատարանը գտնում է, որ պետք է փոխհատուցվեն ինչպես անցյալում կրած, այնպես էլ ապագայում սպասվելիք վճաները: Դիմոնդին դրամադրում է 100 000 եվրո՝ ներառյալ այն գումարները, որոնք կապված են հարկերի հետ:

## 2. Բարոյական վճառ

72. Դիմոնդ պահանջել է 83 000 եվրո՝ որպես բարոյական վճառի փոխհատուցում:

73. Կառավարությունն այս առումով որևէ կերպ չի արձագանքել:

74. Դատարանը գտնում է, որ դիմոդին բարոյական վճառ է պատճառվել: Դաշվի առնելով գործի հանգամանքները և հիմնվելով Կոնվենցիայի 41-րդ հոդվածով նախատեսված իրավական հիմքի վրա՝ Դատարանը որոշում է դիմոդին տրամադրել 40 000 եվրո:

## 3. Ծախսերը և ծախքերը

75. Դիմոնդ դատական ծախսերի համար պահանջել է 67 918,84 եվրո: Նա նշել է, որ իր փաստարանի հոնորարի գումարը 67 187,24 եվրոյից կազմել է 10 457,61 եվրո՝ դատաքննության համար, բարձրագույն դատարանին վճարվել է 720 եվրո՝ որպես դատական ծախս, ինչպես նաև Դատարանին ներկայացված գանգատի համար վճարվել է 111,60 եվրո:

76. Դատարանի պրակտիկայի համաձայն՝ դիմոնդ դատական ծախսերի համար կարող է ստանալ փոխհատուցում միայն այն դեպքում, եթե այդ գումարները հիմնավորված, անհրաժեշտ և ողջամիտ են եղել: Տվյալ դեպքում, հաշվի առնելով իր տրամադրության տակ գտնվող նյութերը և վերոնշյալ սկզբունքները՝ Դատարանը հիմնվելով արդարացի փոխհատուցման պահանջի վրա, դիմոդին հատկացնում է 30 000 եվրո:

## 4. Տուգանային տոկոսները

77. Դատարանը նպատակահարմար է գտնում, որպեսզի տուգանային տոկոսը գանձվի Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած փոխառության միջին տոկոսադրույթի հիման վրա՝ հավելած երեք տոկոս:

## **ՎԵՐՈԳՐՅԱԼԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ԴԱՏԱՐԱՆԸ**

1. Միաձայն վճռում է, որ բողոքը ընդունելի է,
2. Միաձայն վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում,
3. Միաձայն վճռում է, որ Կոնվենցիայի 8-րդ հոդվածից որևէ առանձին հարց չի բխում,
4. Միաձայն վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում,
5. Վճռում է՝
  - ա) միաձայն, որ Վճիռը վերջնական դաշնալուց հետո երեք ամսվա ընթացքում պատասխանող պետությունը, Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան, պետք է դիմողին վճարի հետևյալ գումարները՝
    - 100 000 եվրո նյութական վճարի համար,
    - 30 000 եվրո դատական ծախսերի համար,
  - բ) որ Վճիռը վերջնական դաշնալուց հետո երեք ամսվա ընթացքում պատասխանող պետությունը, Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան, պետք է դիմողին վճարի հետևյալ գումարը՝
    - 40 000 եվրո որպես բարոյական վճարի փոխառուցում
    - ց) որ վճարումը վերոիիշյալ երամյա ժամկետը լրանալուց հետո կատարելու դեպքում այդ ժամանակահատվածի համար պետք է վճարի տուգանային տոկոս, որը հավասար է չկատարված պարտավորության ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած փոխառության միջին տոկոսադրույթին՝ հավելած երեք տոկոս,
6. Միաձայն մերժում է մնացած մասով առկա պահանջները:

Կատարվել է ֆրանսերենով և Դատարանի կանոնների 77-րդ կանոնի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն գրավոր հրապարակվել է 2009 թվականի հունվարի 8-ին:

Կոնվենցիայի 45-րդ հոդվածի 2-րդ մասի և Դատարանի կանոնների 74-րդ կանոնի 2-րդ մասի հիման վրա դատավորներ Ֆուռա Սանդստոռմի, Գյուլումյանի և Սահզ Առնահզի հատուկ կարծիքը կցվում է սույն գործին:

### **Դատավորներ Ֆուռա Սանդստոռմի, Գյուլումյանի և Սահզ Առնահզի հատուկ կարծիքը**

Մենք մեծ մասամբ քեարկել ենք որոշման բոլոր կետերին կողմ, բացառությամբ այն կետերի, որոնք վերաբերում են բարոյական վճարին: Մենք ենթադրում ենք, որ բարոյական վճարի առունով Դատարանն այլ եզրակացության կիանգեր՝ հետևյալ պատճառով.

Դիմողը պահանջել է 83 000 եվրո, իսկ մեծամասնությունը, հիմնվելով արդարացի փոխառուցման պահանջի վրա, որոշեց նրան դրամադրել 40 000 եվրո:

Դաշվի առնելով 6-րդ և 13-րդ հոդվածների խախտման համար տրամադրվող բարոյական վճարի փոխառուցման վերաբերյալ դատական պրակտիկան՝ մենք գտնում ենք, որ այդ գումարը չափից ավելի է և ավելի նպատակահարմար կլինեն տրամադրել 30 000 եվրո:

Մենք այստեղ չենք քննարկում դիմողի բողոքները: Նրա կյանքի համար վտանգավոր վերոնշյալ դեպքերը տեղի ունենալու ժամանակ նա երիտասարդ տղամարդ էր: Այլ գործերով, երբ Դատարանը 3-րդ հոդվածի խախտում է արձանագրել, նա գումարներ է տրամադրել ինչպես նյութական, այնպես էլ բարոյական վնասի փոխհատուցման համար (տե՛ս Միխեևն ընդդեմ Ռուսաստանի, 2006թ. հումկարի 26-ի և Իլիանն ընդդեմ Թուրքիայի Վճիռները): Այս երկու գործերը, այնուամենայնիվ, տարբերվում են սույն գործից նրանով, որ դիմողների ձերբակալության և հարցաքննության ընթացքում վատ վերաբերմունք էր ցուցաբերվել: Բայց տվյալ դեպքում դիմողը նաև կատարելով քոնություններ և, բարձրագույն դատարանի եզրահանգումների համաձայն, նպաստել է այն վտանգավոր իրավիճակի ստեղծմանը, որի գոհն է դարձել հետագյում:

Այս իրավիճակը կարող ենք համենատել Գյուլեքն ընդդեմ Թուրքիայի գործի հանգամանքների հետ, երբ դիմողի տղամ՝ մահացած վիճակում, հայտնաբերվել էր դաժան ցուցերի ընթացքում, և Դատարանը գտավ, որ առկա է հոդված 2-ի խախտում և որոշեց 50 000 ֆրանսիական ֆրանկ տրամադրել որպես պաշտոնատար անձի կողմից անհամաշափ ուժի կիրառման արդյունքում պատճառված բարոյական վնասի, ինչպես նաև մահվան փաստի քննության հետ կապված վարույթի բացբողումների փոխհատուցում:

Այո՛, դժվար է գնահատել պահանջը. բայց 41-րդ հոդվածը Դատարանին պարտադրում է իրականացնել այդ պարտականությունը: Որքան գումար էլ որ հատկացված լինի, այն տվյալ գործով երբեք չի կարող համարվել համաշափ փոխհատուցում: Մյուս կողմից Դատարանը պետք է նաև ապացուցեր փաստերի միջև կապը և խուսափեր այս գործերով տարբեր նկատմամբ կիրառելուց: Ահա թե ինչու ենք մենք գտնում, որ ավելի ճիշտ կլիմեր որպես բարոյական վնասի փոխհատուցում տրամադրել 30 000 եվրո: